ՊԱՏՄԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԴՄԷՋ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՌՈՎՄԱՅ

190 *Ն. Ք. մինչեւ* 428 *Յ. Ք.*

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻՍ

Յօդուածներու շարքը, զոր մտադիր եմ հետըզհետէ հրատարակել Բազմավէպի սիւներուն մէջ, ազատ թարգմանութիւնն է իմ Die politischen Beziehungen zwischen Armenien und Rom (Venedig 1911) *գրութեանս, զոր այս տարի իբր աւարտաճառ ներկայացուցած էի Ֆրիպուրկի (Զուիցերիոյ) համալսարանին փիլիսոփայական բաժնին։ Փոփոխութիւնները, որոնք գերմաներէն բնագրէն կը տարբերին, շատ սակաւ են և միայն հայ ընթերցողին դիւրութեան համար կատարուած։*

Ինծի առաջարկուած նիւթը թէև շատ ընդարձակ էր դոկտորութեան աւարտաճառի մը համար, սակայն սիրով յանձն առի զայն, վասն զի ատով ինձ առիթ կ'ընծայուէր հայկական պատմութեան ամենէն կարևոր և միանգամայն ամենէն չփոթ շրջանին վրայ իմ տեսութիւններս և քննութիւններս հրապարակ հանելու։

Գլխաւոր նպատակս եղաւ գեղեցիկէն աւելի ճշմարիտը փնտռել և մեր պատմութեան հիմերը աւելի զօրացնել. ասոր համար հարկ էր յոյն և հռովմայեցի գրեթէ բոլոր մատենագիրները աչքէ անցնել, արձանագրութիւններու և դրամներու յատուկ ուշադրութիւն մ'ընծայել. մէկ խօսքով, հարկ էր մեր պատմութեան աղբիւրները և վաւերագրերը ճոխացնել և տալ անոնց այն կարևորութիւնը՝ որչափ որ արժանի են։ Ինչպէս աղբիւրները, նոյնպէս նաև զանոնք մեկնող մատենագրութիւնը անհունապէս կը կորսնցնեն իրենց իմաստը և կարևորութիւնը, եթէ անոնք չկարդացուին բուն իսկ բնագրին վըրայ, ուր միայն հեղինակին ոգին դրոշմուած է։ Այս պէտքերը ինչպէս զգացուած նոյնպէս ալ կատարուած են։ Մեր պատմութեան աղբիւրները ես ալ իմ կողմանէս, իրենց բնագրին մէջ, մի առ մի անաչառ քննութենէ անցընելու միջոց՝ յաճախ շատ գոհացուցիչ և մինչեւ հիմայ եղածներէն տարբեր արդիւնքներու հասած եմ։

Այսու հանդերձ հեռի եմ կատարեալ գործ մը ներկայացնելու յաւակնութենէն, մանաւանդ մատենագրութեան մասին կարելի էր դեռ շատ երկեր տեսնել։ Իրաւ որ Միւնշընի մէջ, ուր ընթացքիս նախկին երկու տարիներն անցուցած եմ, ճոխ գրատուն մը գործածելու դիւրութիւնն ունեցայ, բայց իմ գործս առաջարկուած և շարադրուած է Զուիցերիոյ փոքրիկ քաղաքի մը մէջ։

Անհրաժեշտ կարևոր կը համարիմ հոս երկու խօսք ըսել պատմական նոր վարդապետութեան

digitised by A.R.A.R.@

մը վրայ, որ Զամչեանէն սկսեալ մինչև մեր օրերու գրոց մէջ ճարակուած է։ Այսինքն, ոմանք — և Հայոցս մէջ հեղինակութիւն կազմող անձինքներ — չկարենալով հաշտեցնել ազգային՝ կամ աւելի ճիշդ՝ Խորենացւոյ աւանդութիւնը արտաքին մատենագիրներու Հայոց մասին պատմածին հետ, երևակայած են հայկական երկու թագաւորութիւններ ստեղծել, մէկը Վերին Հայոց և միւսը Ստորին Հայոց անուամբ։ Տեղս չներելով մանրամասն ապացուցութիւն մ'ընել այս վարդապետութեան անտեղութիւնը մատնանիշ ընելու համար, կը բաւականանամ ըսել. թէ երևակայութիւնը միայն բաւական չէ նոր թագաւորութիւն մը ստեղծելու. անժխտելի փաստեր պէտք են անոր գոյութեան վկայելու։ Որ և է թագաւորութիւն անծանօթ չկրնար ապրիլ, այլ պէտք է աշխարհագրապէս որոշ հողի մը վրայ գտնուի, իւր գաւառներով և գոնէ արքայանիստ քաղաքով։ Վայրկեան մը համարինք թէ այն թագաւորութիւնը, որուն վրայ մենք պիտի խօսինք գրութեանս մէջ, ըլլար Վերին Հայոց թագաւորութիւնը, իւր Արտաշատ մայրաքաղաքով և Այրարատ ու այլ գաւառներով, որոյ գոյութեան մասին հազար ու մէկ վկայութիւններ տարակոյս չեն թողուր։ Արդ կը հարցնենք, ո՞ւր կը գտնուի երկրորդ կամ Ստորին Հայոց կոչուած թագաւորութիւնը, ո՞ր հողին վրայ կամ աշխարհիս ո՞ր անկեան մէջ. որո՞նք են իր սահմանները, իր դրացի ժողովուրդները, և որո՞նք են այն պատմիչները որ այս թագաւորութեան վրայ խօսած ըլլան. ե՞րբ սկսած է նա և ե՞րբ վերջացած։ Այս բոլորին պատասխան մը չկայ, վասն զի յիշեալ թագաւորութիւնը իրականին մէջ գոյութիւն ունեցած չէ. Հայերը տեսած չեն զայն, օտարները լուր մը չունին անոր վրայ։

Արդ ինչպէս պիտի տեսնենք Հայաստանի մէջ մի միակ թագաւորութիւն մը կար, որուն ոչ Վերին և ոչ Ստորին անունները ճշգաբար կրնան տրուիլ, քանի որ անոր թագաւորները Հայաստանի վերին և վարի մասերուն միանգամայն կ'իշխէին։ Այս հայկական միակ թագաւորութիւնը շրջապատուած էր դրացի փոքր և մեծ տէրութիւններու բոլորակէ մը, և իր երկիրը կից էր, մանրամասնութիւնները զանց ընելով՝ արևելքէն Պարսկաստանի (երբեմն նաև Մարք-Ատրպատականի), իսկ միւս երեք կողմերէն հռովմէական երկիրներու կամ անոնց հովանաւորեալ աշխարհներու, որպիսիք էին Վրաստան, Պոնտոս, փոքր Հայք, Ծոփք, Կապադովկիա, Կոմագինէ, Եդեսիա, Միջագետք, Կորդուք, որոնք երբեմն նաև Պարսկաստանի իշխողաց հովանաւորութեան տակ կ'իյնային։ Այս շրջանակին մէջ տարածուող Հայաստանին թագաւորաց իշխանութեան տակ էին, վերէն՝ Երասխի ափանց վրայ տարածուող Արտաշատը, իսկ վարէն՝ Միջագետքի սահմանաց վրայ գտնուող Տիգրանակերտը, և այս՝ ինչպէս Տիգրան Բ. նոյնպէս Տրդատ Ա. ժամանակ։ Ուրեմն ո՞ւր պէտք ենք փնտռել միւս երկրորդ թագաւորութիւնը. հայկական հողին վրայ չկայ այն, իսկ Հռովմէական պատմութիւնը այդպիսի թագաւորութեան մը գոյութիւնը հռովմէական հողին վրայ չգիտեր։

Այս մոլար ըմբռնումը յառաջ եկած է սոսկ Խորենացւոյ պատիւ ընելու փոյթէն։ Սակայն հռովմէական պատմութիւնը իւր աղբիւրներուն մէջ ճանչցող մը, Խորենացւոյ պիտի զլանայ այդ պատիւը։ Ցիրաւի այդ հեղինակը ուրիշ կողմէ մեր յարգանքին և գնահատման արժանի է, և ոմանցմէ իրեն տրուած «ստախօս» և «խարդախ» տիտղոսները պէտք չեն ստէպ կրկնուիլ. բայց միւս կողմանէ պէտք է ընդունիլ թէ Խորենացին ևս ուրիշ պատմիչներուն պէս կրնար սխալիլ։ Եւ Խորենացին ունի պատմական մեծ սխալներ, զորս այսօր ոչ մէկ լուրջ քննիչ կրնայ ժխտել։ Նա մեր թագաւորաց ամբողջական ցանկ մը և պատմութիւն մ'ունեցած չէ առջևը, այլ զանոնք ասդիէն անդիէն, յաճախ այժմ մեզի ծանօթ մատենագիրներէն ժողոված է և անոնց տուած է իր կողմանէ ժամանակագրական կարգ մը, որ իրականին չհամապատասխաներ. անկից են աւելորդ և պակաս թագաւորներ իրեն քով։ Անոր սխալներէն ոմանք նոյն իսկ մեր ազգային դիւրազգացութեան շատ փայփայիչ չեն. այսպէս նա Արտաշէսեան բնիկ հայ հարստութիւն մը չճանչնար, այլ իրականէն գրեթէ 200 տարի առաջ Արշակունի օտար և եկամուտ հարստութիւնը կը դնէ Հայաստանի մէջ, որուն շարքին վերաբերած ըլլան նաև Տիգրան Բ և Արտաւազդ բնիկ հայկազունները։ Նմանապէս ասորական գրոյցները հայացնելով և Եդեսիոյ թագաւորիկ Աբգարները ի Հայս փոխադրելով Հայոց որչափ պատիւ ըրած կ'ըլլայ չեմ գիտեր։

Վերջապէս ի Հայս մէկ թագաւորութիւն միայն եղած է և անոր պատմութիւնն ալ պէտք է մէկ տեսակ ըլլայ. արտաքին և ազգային մատենագիրները կը խօսին նոյն և միակ թագաւորութեան մը վրայ, որ ժամանակին միւս ժողովըրդոց հետ միասին քալած է օր օրին. ե-

digitised by A.R.A.R.@

թէ այս ճշմարտութիւնը խորենացւոյ քով որ մեր գրատուները և մեր աղբիւրներու բազմութիւնը չունէր, աղօտ աւանդուած է, բայց այն բաւական պայծառ կը փայլի Ագաթանգեղի, Փաւստոսի, Փարպեցւոյ, Ցոյն և Հռովմայեցի մատենագրերու և պատմական ուրիշ յիշատակարաններու մէջ, որոնք այսուհետև մեր վստահութեան աւելի արժանի պէտք է ըլլան։

ԱՂԲԻՒՐՔ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընդարձակ և քննական տեղեկութիւն մը տալ հոս բոլոր աղբիւրներուն, զորս գործածած եմ, պիտի չյարմարէր այս փոքրիկ աշխատութեանս շրջանակին մէջ։ Այս թերին լրացնելու համար ջանացի բնագիրներու լաւագոյն հրատարակութիւնները միայն գործածել։ Այսու հանդերձ թէ՛ գրութեանս ընթացքին և թէ ցաւելուածին մէջ աւանդած եմ, ինչ որ քանի մը հոն հեղինակներու վրայ մասնաւոր կերպով դիտելի և հաղորդելի կարևոր համարած եմ։ Գալով մատենագրութեան, ջանացի ամենէն աւելի ծանօթ և աղբերաց քննութեամբ նշանաւոր եղած և այս շրջանիս համար հեղինակութիւն կազմող պատմագիրները և մասնագիտական երկերը ի խորհրդակցութիւն կոչել, առանց զանց ընելու խիստ քննութենէ մ՛անցնել թէ՛ հնոց աւանդութիւնն և թէ նորերու հակացողութիւնը, ինչ որ գործիս ամէն էջին վրայ պիտի տեսնուի։

Հոս կը դնեմ միայն ամենէն կարեւոր համառօտութիւնները

CIL = Corpus inscriptionum latinarum, Berlin 1863.

FHG = Fragmenta historicorum graecorum, ed. C. Müller, Paris.

Paneg. lat. = Panegyrici latini, ed. A. Baehrens, Leipzig 1874.

PW = Pauly-Wissova: Paulys Realencyclopädie der klassischen Altertumswissenschaft, neue Bearbeitung, herausgegeben von G. Wissowa, Stuttgart 1894.

Vitae (imperatorum). *Այժմեան ընդհանուր գործածութեան համեմատ սոսկ* Vita *ձեւով կոչում կ՛ընեմ Սպարտիանու, Կապիտոլինոսի, Վուլկատիոսի, Լամպրիտիոսի, Ցլեսպելլիոսի և Վոպիսկոսի անուամբ ծանօթ հաւաքածոյն, որ է* SHA = Scriptores historiae augustae, ed H. Peter, Leipzig 1884.

ZDMG = Zeitschrift der deutschen morgenländischen Gesellschaft, Leipzig 1847.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Այն երկիրը որ մէկ կողմանէ Եփրատայ և Կասպիական ծովուն և միւս կողմանէ Կուրի և Ցաւրոսեան շղթայից մէջ կը տարածուի, կը կոչուի Հայաստան։ Բայց այն սկիզբէն ի վեր Հայոց հայրենիք եղած չէ։ Հայք գաղթեցին հոն նախ Ի դարուն Քրիստոսէ առաջ։ Հայաստանի նախկին և իր արձանագրութիւններով մեզի ծանօթ բնակիչն եղած է Ասորեստանցիներէն Ուրարտացի կոչուած ժողովուրդը, որ հաւանականաբար ինքզինքը Խաղտի կը կոչէր՝ իրեն գլխաւոր աստուծոյն անուամբ։ Խաղտեաց ծագումն ստոյգ կերպով հաստատուած չէ տակաւին։ Իրենց բարձր քաղաքակրթութեան վկայ են իրենց տաճարներն և ամրոցները, ջրմուղները և այլ շինութիւններն, մետաղէ և քարէ արտադրութիւններն, ինչպէս նաև կաւագործութիւնը, բայց մասնաւորապէս այն բազմաթիւ արձանագրութիւնները, որոնց մեծագոյնը պահուած են դեռ մինչեւ այսօր։ Իրենց քաղաքական զարգացմամբ Ասորեստանցոց ամենէն վտանգաւոր թշնամիներն եղան, և թէպէտ ստէպ անոնցմէ պարտուած, սակայն փայլուն յաղթանակներ եւս տարած են անոնց վրայ։ Ինչպէս

digitised by A.R.A.R.@

Վինքլէր կ'ըսէ, «անոնք ասորեստանեայ թագաւորաց շատ աշխատութիւն տուին և անոնց հետ Ասորիքի տիրապետութեան վրայ կռուեցան[1]»։ Նոյն իսկ Միջագետքը, որ Ասորեստանցւոց կը վերաբերէր, ազատ չէր անոնց յարձակումներէն։

Հնդևրոպական ժողովուրդներու հոսանքովը թէ՛ Ասորեստանցիք և թէ իրենց դրացի խաղտիք կամաց կամաց տեղի տուին, մինչև որ իրենց անունը պատմութեան ասպարէզէն անյայտացաւ Է դարուն նախ քան Քրիստոս[2]։ Միևոյն ժամանակ կը գտնենք Ուրարտացւոց աշխարհին մէջ նոր և հնդեւրոպական ժողովուրդ մը. Հայերը։

Ուսկի՞ց եկան Հայերը. ո՞ր աշխարհն եղած է իրենց սկզբնավայրը։

Շատ փորձեր եղած են այս հարցման պատասխանելու. պարզագոյն ճամբան կը թուի ինձ անոնց լուծումը հնոց քով փնտռել։ Հերոդոտ և Եւտոքսոս կը համարին թէ Հայք Փռիւգացւոց ճիւղ մ'են, – հետևաբար Արևմուտքէն եկած[3]։ Այս աւանդութիւնը կատարելապէս կը հաստատուի հայերէն լեզուի քննութեամբ։ Վասն զի հայերէնը իր ձայնաբանական օրէնքներով կը պատկանի – ինչպէս որ Հիւբշման[4] ապացուցած է և իր ցուցումն այժմ առ հասարակ ընդունուած է գիտնականներէն – հնդեւրոպական լեզուաց եւրոպական խմբին և ո՛չ թէ իրանականին, թէև նա կարի շատ իրանական տարր կը բովանդակէ. Դեռ ուրիշ վկայութեանց վրայ ևս յենլով կարելի է ըսել, թէ Հայերը Փռիւգացւոց հետ Թրակիայէն, որ է՝ Եւրոպայէն փոքր Ասիա եկած և Ալիսի հովտէն ու փոքր Հայքէն անցնելով մտած են բուն մեծ Հայաստան, որ այնուհետև իրենց անունը կրեց և հոն հաստատուեցան՝ մասամբ նուաճելով և մասամբ ալ հալածելով խաղտիները։ Հայերը կը գտնենք վերջը Դարեհ Վշտասպեայ (521–486 Ն. Ք.) հետ – որուն Պեհիստանի արձանագրութեան մէջ առաջին անգամ կը հանդիպինք Արմինա անուան – պատերազմի բռնուած, և երեք արինահեղ ճակատամարտներէն վերջ իրենց երկիրը մարապարսկական պետութեան սատրապութեան մը վերածուած, որ, ըստ Հերոդոտեայ, արքունի հարկաց երեքտասաներորդ շրջանակին կը պատկանէր։ Իբր 400 թուականին Ն. Ք., Յունաց Նահանջ Բիւրին ատեն, երկիրը բաժնուած էր արևելեան և արևմտեան Հայաստաններու[5]։

---

1. H. Winckler, ի Helmolts Weltgesch. III 59.

2. Խաղտեաց մասին ընդհանուր կերպով միայն ցոյց կու տամ հետևեալ աշխատութիւնները. Lehmann-Haupt և W. Belckի տեղեկատուութիւնները ի Sitzungsber. der kgl. preuss. Akad. der Wiss. zu Berlin 1899 VII 116-120, թարգմանուած ի Հանդէս Ամսօրեայ 1899 էջ 281-284. Նոյն տարուան երկրորդ տեղեկատուութիւն մը, անդ էջ 845-9, նմանապէս թարգմանուած Հանդէսի մէջ 1900, էջ 65–8. Zeitschr. für Assyrol. IX 82–99. 339–360. XIII 307-322. Լեմանի յօդուածը ի Deutsche Rundschau, 1884 Դեկտ., ի Wiener Zeitschr. für die Kunde des Morgenlandes, 1900 Heft 1-2 էջ 1–45, թարգմ. ի Հանդէս Ամս. 1900. իւր գիրքն Materialien zur älteren Gesch. Armeniens und Mesopotamiens, Berlin 1907. Հիւբշմանի Հին Հայոց տեղւոյ անունները (թարգմ. հայ. Վիեննա 1907). Հետաքրքրական պատկերներ Delitzschի Palasttore von Salmanasar IIին մէջ. Keilinschriftliche Bibliothek մեծ հաւաքածոյն և քաղուածոյ մը 3. Սանտալճեանի «Ասորեստանեայ և Պարսիկ սեպագիր արձանագրութիւնք», Վիեննա 1901. Ed. Meyer, Gesch. des Altertums I, Berlin 1909².

3. Հերոդոտ 7, 73. Եւտոքսոս առ Ստեփ. Բիւզանդացւոյ 'Αρμενία.

4. Hübsmann Arm. Gramm. I 16; II 399 և այլուր.

5. Քանի մը գրուածներ Հայոց ծագման և լեզուին վրայ. P. de Lagarde, Armenische Studien, Göttingen 1877. Fr. Müller, Armeniaca I 1865; II 1870; III 1871; IV 1874 Wien. F. Justi, Handbuch der Zendsprache, Leipzig 1864. H. Hübschmann, Armenische Grammatik, I. Teil 1895; II. Teil 1897 Leipzig. Նոյն, Armenische Studien, Leipzig 1883. Նոյն, Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա 1907. P. Kretschmer, Einleitung in die Gesch. der griechischen Sprache, Göttingen 1896. Ed. Meyer, Gesch. des Altertums (Bd. I 613–629), Berlin 1909. Oberhummer und Zimmerer, Durch Syrien und Kleinasien (Գլ. XVI H. Zimmererէն իսկ Գլ. XXIV F. Hommelէն գրուած) Berlin 1899. G. Perrot et Ch. Chipiez, Histoire de l'art dans l'antiquité, vol. V. 1900.

digitised by A.R.A.R.@

Աքիմենեանց կործանմամբ երկիրը աւելի բնիկ իշխաններու և տիրող սատրապներու ձեռքն ինկաւ քան Մակեդոնացւոց։ Աղեքսանդր երբէք չկոխեց հայկական հողը. իսկ Միհրանայ կամ Նէոպտղոմէոսի զայն նուաճած ըլլալը յոյժ տարակուսական է և մեզ բացայայտ կերպով չէ աւանդուած։ Կը թուի թէ Որոնտէսի սատրապական ընտանիքը հոն ամուր դիրք մը ստեղծած է իրեն և կրցեր է իր այդ դիրքը պահել։ Սելևկեանց ժամանակ «Հայաստան ճանչցաւ իրացնէ Սելևկոս Նիկատորի վերագոյն իշխանութիւնը, սակայն ինչ բնիկ իշխաններու ձեռքը, որոնք հարկ վճարելու միայն պարտաւորուած էին և միշտ փորձեր կ'ընէին այս կապն ալ խզելու»[1]։

Կը յիշատակուին իբրև այսպիսի աւելի կամ պակաս անկախ իշխաններ Փոքր և Մեծ Հայոց մէջ Արտուազդ (Ardoates), Արշամ, Փսերքսէս, Արտաբազան, Որոնտէս, և վերջապէս Արտաշէս և Զարեհ, որոնք, երկրին բնիկ ժողովրդեան զգացմանց վրայ վստահ և գաղտնի բանակցութեան մէջ մտնելով այդ ժամանակները Ասիոյ մտեցող Հռովմայեցւոց հետ, ապստամբեցան Սելևկացիներէն և հիմնեցին անկախ թագաւորութիւն մը, որ Հռովմէն իսկոյն ճանչցուեցաւ։

Այս թագաւորութեան Հռովմայ հետ ունեցած քաղաքական վերաբերութիւնները համառօտիւ ներկայացնելու միջոց՝ ստիպուած եմ կէտեր և մասնական դէպքեր շօշափել, որոնք՝ ճշդօրէն խօսելով՝ թէև անձուկ կապ մը չունին երկու ժողովուրդներու առնչութեանց հետ, սակայն կարևոր են ամբողջը լուսաբանելու համար։ Ուրեմն այս շրջանին Համառօտ Հայոց պատմութիւն մ'ընել կը պարտաւորէ նոյն իսկ նիւթը, ամէն վայրկեան պատմութեան կապը չընդհատելու համար։ Արդէն աղբիւրներուն պակասը յաճախ կը ստիպէ պատմիչը ընդհատելու իր պատմութեան կապը և վտանգի մէջ կը դնէ իր նկարագրութեան թելը կորսնցնելու. յիրաւի երբեմն ան կը զուարճանայ աղբեւրաց առատութեամբ, բայց աւելի յաճախ հագիւ ովասիսի մը կը հանդիպի չոր անապատին մէջ։

Հայոց պատմութեան այն շրջանը, որուն վրայ մենք պիտի խօսինք, սովորութիւն է պարզապէս «Արշակունեաց թագաւորութիւն» անուանել, որ անհիշդ է։ Հայաստանի մէջ Արշակունի հարստութիւն մը գոյութիւն ունեցած չէ մինչև քրիստոնէական թուականին 66 երրորդ տարին։ Մեր խօսելիք իբր 618 տարուան ընդարձակ շրջանը՝ իրարմէ որոշակի երեք տարբեր փոքրագոյն շրջաններու կը տորաբաժնուի։ Առաջին, ժամանակ բնիկ հայ հարստութեան, Արտաշէս առաջնոյ, հիմնադրին ազգային թագաւորութեան, յորում թագաւորները միայն հայ ժողովրդեան շահերը կը դիտեն և որդին կը յաջորդէ հօրը. այս թագաւորները իրաւունք ունէին դրամահատութեան, որ այս հարստութեան վերջին թագաւորէն յետոյ այլևս կը դադրի բոլորովին։ Երկրորդ, ժամանակ անցման, Արտաշէսի հարստութեան սպառումէն մինչև Արշակունեաց հաստատուիլը, յորում զանազան ցեղէ և զանազան տեսակ շահեր փնտռող իշխաններ կը նստին Հայոց գահին վրայ։ Երրորդ, ժամանակ Արշակունեաց, յորում Պարթև թագաւորաց ընտանիքէն (= Արշակունի) ճիւղ մը, իբր Հայոց արքունի ցեղ՝ Հայոց գահին վրայ կը հաստատուի. այս հարստութիւնը ներկայացուց հայ և պարթև շահերը մինչև Արշակունեաց կործանումն ի Պարսկաստան Սասանեանց ձեռքով. անկից սկսեալ հայ և հռովմէական շահերը։ Մինչև այս փոփոխութիւնը՝ Հայոց գահը կը վերաբերէր Պարթևաց թագաւորին որդւոյն կամ եղբօրը, իսկ անկից յետոյ Հայոց թագաւորին անդրանկան իրաւունքն եղաւ այն։

Ասոնցմէ կը հետեւի բնական բաժա-

1. Beloch, Griech. Gesch. III, 2. Abteil. 296. Յուստինոս 38, 7.

digitised by A.R.A.R.@

նումն Հայաստանի և Հռովմայ վերաբերութեանց.

Ա. Բնիկ հայազգի թագաւորաց կամ Արտաշէսեան հարստութեան ժամանակ (իբր 190–1 ն. ք. Ք.).

Բ. Օտարազգի թագաւորաց կամ Անցման շրջանի ժամանակ (ի բր 1–66 յ. Ք.).

Գ. Պարթևական թագաւորաց կամ Արշակունեաց հարստութեան ժամանակ (66–428 յ. Ք.).

ՄԱՍՆ Ա.

ԲՆԻԿ ՀԱՅԱԶԳԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

ԿԱՄ

ԱՐՏԱՇԷՍԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Անկախ, միաձոյլ, հայկական թագաւորութեան մը հիմնադիրն եղաւ ԱՐՏԱՇԷՍ Ա *(190–161.. ն. Ք.)։ Սելևկեան թագաւորութեան տկարութիւնը իր հիմնարկութեան իսկ ժամանակ սկսած էր։ Այդ տկարութեան պատճառն էր մէկ կողմանէ յարատև անմիաբանութիւնն արքունի ընտանեաց անդամներուն մէջ, մէկալ կողմանէ ընդարձակ հեռաւորութիւնը նահանգներուն, որոնք թոյլ կերպով մը միայն կապուած էին կեդրոնին հետ։ Սոյն նահանգներուն մէջ բնակող ժողովուրդն՝ էր այլազան, լեզուով և բարքով օտար իւր տէրերէն, ընդհանրապէս թշնամի. զօրաւոր բազկով մը միայն սանձի մէջ զըսպուած։ Սելևկոս Նիկատորի բոլոր յաջորդները քաջակորով իշխաններ չէին, ուստի քաղաքներ ու ժողովուրդներ իրենք զիրենք ազատ հռչակեցին կարգաւ։ Պարթևաստանի, Բակտրիոյ, Հայաստանի և Հրէաստանի մէջ նոր թագաւորութիւններ կանգնուեցան։ Բայց ամենէն աւելի ջլատեց Սելևկեանց զօրութիւնը Հռովմայեցւոց յառաջխաղացումն։ Հպատակ ժողովուրդները Հռովմայեցիներէն խրախոյս և աջակցութիւն գտան։ Սկիպիոնի փառաւոր յաղթութիւնը Անտիոքոս Մեծի վրայ, Մագնեսիոյ մօտ (190ին վերջերը[1] ն. Ք.) նշանը եղաւ անկախութեան մը ընդհանուր շարժման. Փոքր Ասիոյ մեծ մասն ինկաւ հռովմէական ազդեցութեան տակ։ Արևելքի բոլոր ժողովուրդները վազեցին Հռովմ, և ծերակոյտը նպաստեց անոնց և ջանաց կատարել անոնց իղձերը։*

Ի՞նչ ըրաւ Հայաստան։

Մագնեսիոյ պատերազմէն առաջ կ'իշխէին հոն երկու հայազգիներ, Արտաշէս և Զարեհ, իբր զօրավարք Անտիոքոս երրորդի։ Անտիոքոսի բռնադատ թոյլտուութեամբ անոնք հոն իբր անկախ իշխաններ կը տիրէին, մէկն՝ արևելեան, իսկ միւսն՝ արևմտեան ու փոքրագոյն մասին մէջ։ Հռովմայ և թագաւորին մէջ պատերազմ ծագած միջոցին՝ անոնք առաջինին կողմը բռնեցին, և յաղթութենէն վերջը իրենք զիրենք թագաւոր հռչակելով, իբր այսպիսի ճանչցուեցան ծերակոյտէն[2]։ Ամենահաւանական է թէ այս առթիւ առաջին հայկական նուիրակութիւն մը Հռովմ գացած է. զայս կը թելադրէ մեզի Պողիւբիոսի ընթերցումը[3]։ Նոր թագաւորները, որոնք իբր ճարտար զօրավարներ փորձ էին զինուորական իրաց, գործածեցին իրենց բովանդակ տաղանդը և պատերազմական արուեստը, ընդարձակելու համար նոր հիմնուած տէրութիւնը։ Զարեհ, բացի քանի մը ուրիշ տեղերէն, ունէր Ակիսենէ (Acisene *Հանձիթ?), Օդոմանտիս և Ծոփք գաւառները, վերջնոյս կարկատիոկերտ մայրաքաղաքին հետ։ Ասկէ վերջ Զարեհի անունը այլևս չլսուիր[4]։*

Շատ աւելի մեծ էր մասը, զոր Արտաշէս Ա. գրաւեց։ Նա առած էր Հայաստանի հարուստ և կարևոր կեդրոնավայրը. բերրի դաշտավայրեր, գրոյցներով նուիրական եղած լեռներ, ջրաշատ գետեր և հովիտ-

1. Wilcken առ P W «Antiochos» 25.
2. Ստրաբոն 11, 14, 15.
3. Հմմտ. Պողիւբ. ԻԲ 1, 7, 16.
4. Ստրաբ. 11, 14, 2; 14, 5.

digitised by A.R.A.R.@

ներ — որոնց մօտ Հայը մինչև այսօր դեռ նախամեծարութեամբ մը կը նստի, — մէկ խօսքով Այրարատայ հողը։ Նա կը միացնէր քաջայանդուգն զօրավարի և հեռատես քաղաքագիտի յատկութիւնները։ Այդ յատկութիւններն էին՝ որ զինքը հպատակութենէն անկախութեան, սպարապետութենէն թագաւորութեան բարձրացուցին։ Այժմ ելաւ նա իր անձուկ սահմաններէն և արևելակողմը՝ Մարաստանէն գրաւեց Կասպիական (յետոյ Փայտակարանը), Փաւնիտիս և Վասպուրական գաւառները. հիւսիսակողմը Վրացիներէն առաւ լեռնային Տայք (Պարիադրիսը), Կղարջք (Խորսենէ) և Գուգարքը. արևմտակողմը և հիւսիս-արևմտակողմը Խալիբներէն և Մոսինիքներէն առաւ Կարինը և Դերջանը. Եկեղեացը և Անտիտաւրոսի շուրջը գտնուող երկիրները Կատաւոններէն՝ իսկ հարաւակողմը Տարօնը[1] Ասորիներէն առաւ[2]։ Իր տիրապետութիւնները մնայուն էին, և գիտցաւ զանոնք իր տէրութեան այնպէս յօդել, որ այնուհետև անոնք իբր բնիկ հայկական նահանգներ նկատուեցան։

Շատ լաւ հասկցաւ Արտաշէս իր տէրութիւնը միաձև ձուլել և ազգային գիտակցութիւն ներշնչել ժողովրդեան։ Թերևս իր ժամանակ սկսան առաջին անգամ միաձոյլ տարր մը կազմել զանազան ցեղեր, որոնք լեռներով և ձորերով իրարմէ բաժնուած և իրարու հետ թոյլ կերպով կապուած էին։ Ջանաց վերջ մը տալ հին դրութեանը, որ անոր մէջ կը կայանար, որ երկրին մէջ տիրող շարք մ'իշխաններ իրարմէ անկախ կ'իշխէին և անկարող էին դիմադրելու օտարին։ Անշուշտ ձուլելու այս ձգտումին վերագրելու է յարձակումը, զոր 163ին ըրաւ նա իր վախճանած ընկերակցին Զարեհի թագաւորութեան դէմ։ Արտաշէս կ'ուզէր անոր ժառանգները ասպարիզէն հեռացնել, բայց իրեն դրացի Արիարաթ Ե (163–130) Կապադովկացին, որուն դիմած էր Միհրոբարզան թագաժառանգը, չուզեց համաձայնիլ անոր իղձերուն և Միհրոբարզանը իր հայրենի գահը դարձուց[3]։ Արիարաթ չէր ուզեր անշուշտ հզօր Արտաշէսը իրեն անմիջական դրացի ունենալ։ Արտաշէս Ծոփքը իր երկրին միացնելու ծրագիրը կըտակեց իւր յաջորդներուն, որոնցմէ Տիգրան Մեծն կատարեց զայն։

Բայց զօրաւորագոյն կապը, որով այս հանճարեղ հիմնադիրը իր նոր գրաւած երկիրները և զանազան ցեղերը իրարու հետ միացուց, եղաւ մի միակ ազգային լեզուի մը գործածութիւնը մտցնելը[4]։ Նա առաջին վայրկենին ըմբռնեց ազգային լեզուի մը կարևորութիւնը։ Ամէն իրաւունք ունինք հաւատալու թէ նա ազգին մտաւորական և քաղաքակրթական զարգացման համար շատ բան ըրած է։ Իր յունական դաստիարակութեամբը հիմը դրաւ Հայաստանի մէջ յունական կրթութեան մը, այնպէս որ իր յաջորդները պարծանքով մը յոյն գիտուններ իրենց արքունիքը կը պահէին։

Նա գիտցաւ գնահատել, ինչպէս յունական կրթութեան կարևորութիւնը, նոյնպէս մեծ Կարքեդոնացւոյն Աննիբաղի զինուորական հանճարը։ Սա Հայոց արքունիքը հիւր եղաւ։ Աքսորեալը ինչ ինչ բաներ սովրեցուց Արտաշիսի և խորհուրդ տուաւ անոր — երբ օր մը Երասխայ ափունքները շրջելով ի բնէ ամուր կէտ մը գտած էր — գետին ափանց վրայ քաղաք մը հիմնել։ Նա իսկոյն ներկայացուց թա-

1. Հիւբշման, Հայոց տեղւոյ անունները, էջ 21, կ'ուզէ փոխանակ Տարօնոյ Ταμωνῖτις – Տմորիք կարդալ, հակառակ Քիբերտի (ի Monatschr. der k. Akad. der Wiss. zu Berlin 1873, S. 173).

2. Ստրաբոն 11, 14, 5. Համմ. Հիւբշման Հայ. Տեղ. 16–22.

3. Դիոդ. Սիկ. De virt. et vitiis (ԼԱ գրքէն) էջ 584. Maiի քով (Script. vet. nova coll. II 438) փոխանակ Միհրոբարզանայ կայ ᾿Αρα. ϑ. * պակասաւոր անունը. FHGի մէջ Միւլլէր այս հատուածը 163դ տարուան մէջ կը դնէ։ Նոյնպէս Niese ի PW «Ariarathes» V5 կ'ընդունի 163 թուականը.

4. Ստր. 11, 14, 5.

digitised by A.R.A.R.@

գաւորին յատակագիծ մը։ Արտաշէս սիրով ընդունեցաւ առաջարկը և Կարքեդոնացւոյն յանձնեց անոր շինութեան վերակացութիւնը։ Այս կերպով կանգնեցաւ մեծ քաղաք մը, երեք կողմէն պատկառելի գետով պաշտպանուած, իսկ ցամաքակողմէն պատուարով ամրացած, որ հիմնադրին անուամբ Արտաշատ կոչուեցաւ և այնուհետև եղաւ Հայոց մայրաքաղաքը[1]*։*

Յառաջակողմեան Ասիոյ ամէն կարեւոր գործերուն մէջ իր բաժինը ունէր Արտաշէս։ Անոր անունը կը գտնենք այն դաշինքին մէջ, զոր 180ին ն. Ք. կնքեցին մէկ կողմանէ՝ Եւմենէս Պերգամոցին, Արիարաթ Կապադովկացին և Բրուսիաս Բիւթանիացին, իսկ միւս կողմանէ՝ Փառնակ Պոնտացին և Միհրդատ արքայ Փոքր Հայոց։ Վերջիններս Գաղատիոյ մէջ գրաւումներ ըրած էին, բայց առջիններուն անակնկալ միութենէն և յարձակումէն սարսափած, բռնադատուեցան ստորագրել խաղաղութեան դաշինք մը[2]*։*

Արտաշէսի յաջողութիւնները այնքան աժան գնով չգնուեցան։ Սելևկեանք չէին ուզեր հրաժարիլ իրենց գերիշխանութեան իրաւունքէն Հայաստանի վրայ, հակառակ անոր որ Հռովմ զՀայաստան ազատ թագաւորութիւն ճանչցած էր։ Ժամանակ մը Անտիոքոս Դ (175–164) ամենէն հզօր իշխողը դարձաւ յառաջակողմեան Ասիոյ մէջ։ Յետ աւերելու պոնտական գաւառները՝ անցաւ Եփրատը, յարձակեցաւ Հայաստան և յաղթութիւն մը տարաւ հոն Արտաշէսի վրայ (իբր 165 ն. Ք.)[3]*։*

Պարտեալը ստիպուեցաւ յիրաւի ընդունիլ խաղաղութեան պայմանները, սակայն չմոռցաւ կրած ձախողութիւնը։ Ուստի դաշնակցեցաւ Տիմարքոսի հետ, որ Սելևկեանց տեղակալն էր Մարաստանի մէջ և ինքզինքը իբր Մարաց թագաւոր ճանչցնել տուաւ ի Հռովմ ծերակոյտէն։ Տիմարքոս, անտարակոյս Արտաշէսի գնդերով միասին, քալեց Դեմետրիոս Ա. (162–152 ն. Ք.) դէմ, և հասնելով գրաւեց Զեգմա Եփրատին մօտ, ոչ շատ հեռի Անտիոքէն և յետոյ յաղթանակաւ զԲաբելոնիա (161). բայց յաջորդ տարին իր անգթութեան համար սպանուեցաւ[4]*։*

Այս գործակցութենէն վերջ մեր տեղեկութիւնները կը դադրին Արտաշէս Ա. վրայ։ Նա դեռ մինչև ե՞րբ թագաւորեց՝ չենք գիտեր. սակայն ապահովապէս երեսուն տարի գահակալած պիտի ըլլայ ընդ ամէնը։

Իր բանակին զօրութեան վրայ խօսք կ'ըլլայ. կ'ուզենք հաւատալ որ Արտաշէս Ա. ինչպէս հայկական թագաւորութեան հիմնող, նոյնպէս ալ հայկական բանակին կազմակերպողն եղած ըլլայ[5]*։ Այս մեծ անձնաւորութիւնը անտարակոյս իրենց երգերով անմահացնել փորձեցին ի Հայս ամենահին ժամանակներէ ի վեր նշանաւոր երգիչներ*[6]*։*

ԱՐՏԱՒԱԶԴ Ա. *մասին այնչափ միայն*

1. Ստր. 11, 14, 6. Պլուտարքոս Լուկուլլոս 31. Դիոդ. Սիկ. ի FHG. II էջ X 9.

2. Պողիբ 26, 4, 6.

3. Դիոդ. Սիկ. ի FHG II էջ X 9. Ապպիան Ասորականք 45. 46 *կը համարի թէ Արտաշէս պատերազմին մէջ բռնուած ըլլայ.* Մակաբայեցւոց Ա. 3, 37. Յովսեպոս Հնախ. ԺԲ. 297. Պորփիւր առ Հերոնիմեայ Comment. in Daniel c. XI v. 44. *սա կ'ըսէ թէ Արտաշէս յարձակում մը պատրաստած էր Ասորւոց վրայ։*

4. Դիոդ. Սիկ. ի FHG II էջ XII 13. *Թուականի համար տես հոն Միւլլէրի ծանօթութիւնները և* Gutschmid, Gesch. Irans 40–42.

5. Դիոդ. Սիկ. ի FHG II էջ X 9.

6. *Բնաւ տարակոյս չի կայ, որ հայ երգիչները այսպիսի թագաւոր մը, որ երկրին անկախութիւն տուաւ և ընկճեալ ժողովուրդը օտարին լծէն ազատեց, իրենց երգերով անմահացուցած պիտի ըլլան։ Անոր համար կարելի է Խորենացւոյ մօտ ինչ ինչ երգերը, որոնք Արտաշէս մը կ'երգեն, ասոր վերագրել. այսպէս* Ա. 30, *ուր Արտաւազդ որդւոյն և Արտաշատայ հիմնուելուն վրայ կը խօսուի. նոյնպէս* Բ 53ը, *ուր Կասպիական գաւառին նուաճման վրայ կը խօսուի, կարելի է Ստրաբոն* 11, 14, 5*ի հետ կապ ունենալ։ Դարձեալ.պէտք էր աւելի ասոր քան որ և է ուրիշ Արտաշէսի մը* (= Տըրդատ Բ?) *վերագրել, ինչ որ* Խորենացի Բ 59, *վաճառականութեան, ճամբաներու շինութեան և ուրիշ բարեկարգութիւններու մասին ի Հայս Արտաշէսի մը անուամբ աւանդած է։ Վասն զի, բացի անկից որ բազ-*

digitised by A.R.A.R.@

գիտենք, որ նա Պարթևաց Միհրդատ թագաւորին հետ պատերազմեցաւ՝ սորա իշխանութեան վերջին տարիները[1]։

Իսկ ՏԻԳՐԱՆ Ա. մասին այսչափ միայն գիտենք, որ նա հայր էր Տիգրան Երկրորդի[2]։

Հ. Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ

մաթիւ Արտաշէսներու մէջ սա միայն կը յիշուի յունական կրթութեամբ զարգացած, դժուարին պիտի ըլլար վերոյիշեալ բարեկարգութիւնները — թերևս նաև դեռ ինչ ինչ բաներ որոնց Վաղարշակի մը կը վերագրուին — յետոյ գրանեան ժամանակի մէջ դնել. որովհետև Տիգրան Բ. և անոր քաղաքակիրթ որդւոյն Արտաւազդայ ժամանակ պէտք ենք Հայաստանը մեծաւ մասամբ արդէն օժտուած ենթադրել յիշեալ կարգադրութիւններով։

1. Տես Յաւելուած, Ա. Արտաւազդ Ա.
2. Ապպիան Ասորականք 83.

ՄԵԾ ՀԱՆԴԷՍ ՄԸ ՓՈՔՐԻԿ ԳԻՒՂԻ ՄԷՋ

Հոկտեմբեր 13 անմոռանալի օր մը կը դրոշմէր Լիտոյ փիքքոլոյի խոնարհ ու համեստ տարեգրութեանց մէջ։

Վենետկոյ մօտ՝ լճակի ծանծաղին մէջ ծաւալած ճախճախուտ կղզիները, որոնց վրայէն երբեմն հռովմէական բանակներ կ'անցնէին դէպ ի արևելք արշաւանաց միջոց, և ուր գոթական ուժեր հաւաքուած կործանիչ հրոսակներ կ'արձակէին դէպ ի նորածին Վենետիկ և ի ծիրանազարդ Հռաւենննայ, և ասկից յետոյ ամբողջ միջին դարերու մէջ վենետկեան սուրհանդակներ կը սուրային դէպ ի Պարսկաստան և Արևելք, երկար դարեր կը մնային մոռացուած ու ամայի, և ծովուն ալիք յարատև հոսանքներով ժժմակներու կոյտերու տակ կը ծածկէին ամէն ինչ, հազիւ դեռ 150 տարի առաջ մի քանի ձկնորսներ վենետկէն կ'երթային հոն դարձեալ բնակութիւն հաստատելու և ձկնորսութեամբ պարապելու։ Հայու մը հեռատեսութիւնը պիտի կենդանացնէր դարձեալ այդ լքեալ վայրերը և դարձեալ կեանք պիտի տար հոն աշխոյժ և աշխատասէր բարի ժողովրդեան մը, որ մինչև այսօր կ'օրհնէ անոր յիշատակը։ Երախտագիտութեան ըզգացումն կը յորդէ ամէն սրտերէ երբ կը յիշեն ԵՂ. ԱՆՏՈՆ ՔԱՋՈՒՆԻ անունը։

Քառասուն տարի առաջ դեռ հազիւ 10–15 ընտանիք կը գտնուէին հոն, երբ Մխիթարեանք գնելով այդ ճախճախուտները՝ Քաջունի եղբայրը կը սկսէր հաստատել հոն մշակութիւն որթի և պտղատու ծառերու և բանջարեղինաց։ Այսօր 400–է աւելի է ժողովուրդը, և արդէն կը կազմէ փոքրիկ աւան մը՝ մրցակից շրջակայ գիւղերու։ Ունի իւր երկսեռ տարրական վարժարանը յատուկ վարժուհիով, փոքրիկ եկեղեցին, արդեսեան ջրհորները, և կը վայլէ խաղաղ բարօրութիւն մը երջանիկ աշխատասիրութեամբ։ Մի քանի տարիներ առաջ Վ. Հ. Դանիէլ Վ. Ստեփանեան, Ուխտիս գործակալը, կը նորոգէր և նկարագեղ կը զարդարէր հինցած եկեղեցեակը, և այսօր այժմեան գործակալը Վ. Հ. Յովսէփ Վ. Մարգարեան, հին աւերած զանգակատան տեղ կը կանգնէր ի հիմանց գեղեցիկ ճաշակով գոթական նուրբ զանգակատուն մը 30 մեղր բարձր, երեք նոր ներդաշնակ զանգակներով, որոնց օծումն ու նաւակատիքը կը կատարուէր հանդիսաւոր շքեղութեամբ։

Աւաւօտուն կանուխ յատկապէս վարձուած հանդիսական շոգենաւ մը պատռելով լճակին խաղաղ ալիքները և մառախլապատ օդոյ նրբին քօղը կը տանէր դէպ ի հանդիսավայրը հրաւիրեալց խումբ մը, որոնց մէջ գլխաւոր կը բազմէր Վենետկոյ ծիրանաւոր Պատրիարքն իր աւագերէց քահանաներով և մերձակայ Պուրանոյ քա-

---

1. Այդ տեղւոյ զարգացման մեծ խնամք տարած է նաև Թերթիս Մեծ. աշխատակիցներէն Վեր. Հ. Վահան Վ. Մէհտէրեան որ երկայն տարիներ Միաբանութեանս Գործակալութեան պաշտօնը վարած է։

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@